

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԶՎՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՄ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՉԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ**

Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ
ԵՊՀ միջազգային տնտեսագիտության
ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. ՀՆԱ աճ, պետական բյուջե, արտաքին պարտք, փոխարժեք

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը տնտեսական նոր կապեր է հաստատում մի շարք երկրների հետ, համագործակցում կամ միանում է տարբեր միջազգային կազմակերպությունների, որոնցից հատկանշական է հենց Եվրոպական միությունը: Հայաստանի և Եվրոմիության միջև 1996 թ-ի ապրիլին ստորագրված և 1999 թ-ի հուլիսին ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը (ԳՀՀ) մի նոր շունչ հաղորդեց Հայաստանի տնտեսությանը և արդեն իսկ ԳՀՀ կնքմանը հաջորդած կարճ ժամանակահատվածում Հայաստանում գրանցվել է զարգացման կայուն մակարդակ:

Աստիճանաբար ՀՀ և ԵՄ երկրների միջև կապը առավել սերտանում և ընդգրկում է տնտեսական նոր ոլորտներ և շրջանակներ: Վերլուծելով ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները ԵՄ անդամակցության չափանիշներին համապատասխան, պետք է նշել, որ ՀՆԱ աճի տեմպը վերջին հինգ տարիների ընթացքում կրել է տատանողական բնույթ՝ հիմնականում դրսևորելով աճի բնույթ՝ նվազում արձանագրելով նախորդ տարվա հետ համեմատ միայն 2013թ-ին: Այսպես, 2010թ-ին ՀՆԱ տարեկան աճի տեմպը կազմել է 2.2%, որը զիջում է 2001թ.-ի ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպը շուրջ 4 անգամ: Իսկ 2002-ից սկսած մինչև 2010թ. ՀՆԱ աճի տեմպը երբեմն գերազանցել է 10%-ի սահմանագիծը: 2011թ-ին ՀՆԱ տարեկան աճի տեմպը գրեթե երկու անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ կազմելով 4.7%: Աճի միտումը շարունակվել է նաև 2012թ-ին՝ կազմելով 7.2%, սակայն, կտրուկ անկում գրանցելով 2013թ-ին, գրեթե երկու անգամ նվազելով՝ ցուցանիշը կազմեց 3.5%:

**Գծապատկեր 1. ՀՆԱ աճի տեմպի համեմատական Հայաստանի, ԱՊՀ,
ԵՄ և ԵՄ անդամակցությանն առավել մոտ երկրների
(ԱՄՆ, Ճապոնիա, Ավստրալիա, Կանադա, Իրան) միջև**

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ Գիտական հանդես

#	ՀՆԱ-ի աճ(%)	Երկիր 2010	ՀՆԱ-ի աճ (%)	Երկիր 2013
1	9.2	Թուրքմենստան	11.7	Մոնղոլիա
2	8.5	Ուզբեկստան	10.5	Ղրղստան
3	7.7	Բելոռուսիա	10.2	Թուրքմենստան
4	7.3	Ղազախստան	8.9	Մոլդովա
5	7.1	Մոլդովա	8.0	Ուզբեկստան
6	6.6	Շվեդիա	7.4	Տաջիկստան
7	6.5	Տաջիկստան	6.0	Ղազախստան
8	6.4	Մոնղոլիա	5.8	Ադրբեջան
9	6.3	Վրաստան	4.1	Լատվիա
10	5.9	Իրան	3.3	Լիտվա
11	4.9	Ադրբեջան	3.5	Հայաստան
12	4.7	Ճապոնիա	3.5	Ռումինիա
13	4.5	Ռուսաստան	3.2	Վրաստան
14	4.4	Սլովակիա	2.9	Մալթա
15	4.3	Մալթա	2.7	Ավստրալիա
16	4.2	Ուկրաինա	2.1	Լյուքսեմբուրգ
17	4.0	Գերմանիա	2.0	Կանադա
18	3.9	Լեհաստան	1.9	Ուկրաինա
19	3.4	Ֆինլանդիա	1.9	ԱՄՆ
20	3.4	Կանադա	1.7	Մեծ Բրիտանիա
21	3.1	Լյուքսեմբուրգ	1.6	Լեհաստան
22	2.6	Էստոնիա	1.6	Շվեդիա
23	2.5	Չեխիա	1.5	Ճապոնիա
24	2.5	ԱՄՆ	1.3	Ռուսաստան
25	2.2	Հայաստան	1.1	Հունգարիա
26	2.3	Բելգիա	0.9	Բելոռուսիա
27	2.0	Ավստրալիա	0.9	Բուլղարիա
28	1.9	Պորտուգալիա	0.9	Սլովակիա
29	1.8	Ավստրիա	0.8	Էստոնիա
30	1.7	Միացյալ Թագ.	0.4	Գերմանիա
31	1.7	Ֆրանսիա	0.4	Դանիա
32	1.7	Իտալիա	0.3	Ավստրիա
33	1.5	Նիդերլանդներ	0.2	Բելգիա
34	1.4	Դանիա	0.2	Ֆրանսիա
35	1.3	Լիտվա	-0.3	Իռլանդիա
36	1.3	Սլովենիա	-0.8	Նիդերլանդներ
37	1.3	Հունգարիա	-0.9	Չեխիա
38	1.3	Կիպրոս	-1.0	Խորվաթիա
39	0.4	Բուլղարիա	-1.1	Սլովենիա
40	-0.2	Իսպանիա	-1.2	Իսպանիա
41	-0.3	Լատվիա	-1.4	Պորտուգալիա
42	-0.5	Ղրղստան	-1.4	Ֆինլանդիա
43	-0.9	Ռումինա	-1.9	Իտալիա
44	-1.1	Իռլանդիա	-3.9	Հունաստան
45	-2.3	Խորվաթիա	-5.4	Կիպրոս
46	-4.9	Հունաստան	-5.8	Իրան

Աղբյուրը՝ www.worldbank.org

ՀՆԱ աճի ցուցանիշներով Հայաստանը ԱՊՀ երկրների, ԵՄ երկրների և ԵՄ անդամակցությանն առավել մոտ երկրների (ԱՄՆ, Ճապոնիա, Ավստրալիա, Կանադա, Իրան) շարքում 2010թ.-ին զբաղեցրել է 25-րդ տեղը, սակայն արդեն 2013թ.ին Հայաստանի դիրքերը առավել բարելավվեցին՝ զբաղեցնելով 11-րդ տեղը՝ անգամ այն պարագայում, որ նախորդ տարվա համեմատ ՀՆԱ տարեկան աճի տեմպը նվազում էր արձանագրել:

2010թ-ի ՀՆԱ մեծությամբ Հայաստանի տնտեսությունը 192 երկրների մեջ զբաղեցնում էր 152-րդ տեղը՝ զիջելով Ադրբեջանին, սակայն գերազանցելով Վրաստանին¹:

ՀՆԱ աճում լուրջ ավանդ ունի ծառայությունների ոլորտը: Գյուղատնտեսության ոլորտը 2010թ.-ին՝ պայմանավորված բնակլիմայական անբարենսպաստ պայմաններով անկում ապրեց, սակայն արդեն 2011թ.-ին 2009թ-ի համեմատ շուրջ երկու անգամ աճ արձանագրեց՝ անգամ նախորդ տարվա կտրուկ անկումից հետո:

Շինարարության ճյուղը 2009թ-ի 41.6% իրական անկումից հետո դեռևս չի վերականգնվել: Շինարարական ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում 2010թ.-ին կազմել է 3.3 տոկոս և 2011թ.-ին նախորդ տարվա համեմատ - 12.5%-ով անկում է ապրել:

2009 թվականի տարեսկզբին արդյունաբերության ճյուղը զգալի անկում է ապրում, սակայն արդեն տարվա երկրորդ կեսին՝ ի հաշիվ միջազգային շուկայում մետաղների գների աճի, արդյունաբերության ճյուղը արագ աճ սկսեց գրանցել և առավել մեծ աճ գրանցվեց 2010թ.-ին:

2011թ-ին արդյունաբերության և էներգետիկայի մասնաբաժինը իրական ՀՆԱ-ի մեջ կազմել է 431.2 տրլն. դրամ՝ կազմելով ՀՆԱ-ի 13.6% , շինարարության մասնաբաժինը՝ 595.9 տրիլիոն՝ համապատասխանաբար 18.8%, գյուղատնտեսությանը՝ 511.4 տրլն. դրամ՝ համապատասխանաբար՝ 16.2%:


¹ World Development Indicators Database, World Bank, 2010

Աղյուսակ 2. Ծառայությունների ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) 2007-2011թթ²

	2007	2008	2009	2010	2011
Ընդամենը ՀՆԱ	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա	21.80%	17.20%	15.00%	13.10%	13.60%
Շինարարություն	19.60%	23.70%	24.50%	26.90%	18.80%
Գյուղատնտեսություն	19.10%	18.70%	18.20%	15.90%	16.20%
Տրանսպորտ և կապ	17.70%	18.00%	18.20%	18.20%	20.70%
Ֆինանսական և բիզնես ծառայություններ	17.70%	18.00%	18.20%	18.20%	20.70%
Այլ ծառայություններ	4.10%	4.40%	5.90%	7.70%	10.0%

Համախմբված բյուջեի պակասուրդը 2013թ.-ին բացարձակ արժեքով կազմել է -68847.5 մլն. դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 11,3%-ով:

Գծապատկեր 1 ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2008-2013թթ (մլն դրամ)



2 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am

2008-2013թթ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդների գումարը կազմել է 747 միլիոն դրամ: Վերջին տասը տարիների ընթացքում պետական բյուջեի համար եկամուտների նշանակալի աղբյուր են հանդիսացել հարկերը և տուրքերը: 2013թ.-ին 2008թ.-ի համեմատ պետական բյուջեի պակասուրդը ավելացել է գրեթե 5.7 անգամ: ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2011 թվականին կազմել է ՀՆԱ-ի 2.8%-ը՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց: Վերջին վեց տարիների ընթացքում բյուջեի դեֆիցիտը ամենամեծ ցուցանիշը դրսևորեց 2009թ.-ին՝ պայմանավորված գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամով, սակայն արդեն հաջորդ տարի պետական բյուջեի դեֆիցիտը կրճատվեց 1.3 անգամ:

Տնտեսության ակտիվության ցուցանիշը 2013թ-ին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.83%-ով: Այն դեպքում, երբ առևտրի իրական աճի ինդեքսը 2012թ-ի հունվար-փետրվար ամիսներին կազմել է 100,1%, իսկ ծառայությունների իրական աճի ինդեքսը 115%:

Աղյուսակ 3 ՀՀ հիմնական ամսական մակրոտնտեսական ցուցանիշները


	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ), աճ, %	-	-	-	-	106,1	107,2	103,5
Արդյունաբերության իրական աճի ինդեքս, %	102,6	101,7	92,5	109,7	114,1	108,8	106,8
Գյուղատնտեսության իրական աճի ինդեքս, %	109,6	101,3	99,9	86,5	114,1	109,8	107,6
Շինարարության իրական աճի ինդեքս, %	119,7	103,1	62,6	96,7	88,5	100,2	91,9
Առևտրի իրական աճի ինդեքս, %	109,3	107,9	95,9	104,2	103,5	103,6	101,2
Ծառայությունների իրական աճի ինդեքս, %	121,8	113,8	101,3	103,8	106,1	110,8	103,6
Գնաճ (12-ամսյա), %	6,6	5,2	6,5	9,4	4,7	3,2	5,6
Գնաճ (նախորդ տարվա դեկտ.-ի նկ.), %	6,6	5,2	6,5	9,4	4,7	3,2	5,6
Գնաճ (ժամանակաշրջանի միջին), %	4,4	9	3,4	8,2	7,7	2,6	5,8
Դրամի փոխարժեքը ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ, ժամանակաշրջանի միջին	342,1	306,0	363,3	373,7	372,5	401,8	409,6

2011թ-ին գնաճը (միջին) կազմել է 7,7%, իսկ 2012թ-ի հունվար-փետրվար ամիսներին կազմել է 3,9%: 2011թ-ին գնաճը նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ կազմել է 4,7 %, իսկ 2012թ-ի հունվար-

փետրվար ամիսներին այդ նույն ցուցանիշը կազմել է 2,8%: ԵՄ երկրների հետ համեմատած՝ ՀՀ ՀՆԱ շեղումը բավականին մեծ է: Գնողունակության համարժեքությունը հաշվի առնելով՝ 2011թ.-ի դրությամբ ՀՀ-ում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է ԵՄ անդամ երկրների ցուցանիշի ընդամենը 16%-ը:


Հայաստանի արտաքին պարտքը եթե 1999թ-ին կազմում էր 870 մլն. ԱՄՆ դոլար, ապա 2009թ-ին այդ պարտքը հատկապես կապված միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամով ավելացավ և կազմեց 2,967 մլրդ. ԱՄՆ դոլար: 2011թ. ՀՀ պետական պարտքը կազմել է 1,592.7 մլրդ դրամ (4,128.7 մլն ԱՄՆ դոլար), որից 1,376.5 մլրդ. դրամը բաժին է ընկնում ՀՀ արտաքին պետական պարտքին, իսկ 216.2 մլրդ. դրամը բաժին է ընկնում ՀՀ ներքին պետական պարտքին: 2011թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ պետական պարտքը աճել է 213.5 մլրդ. դրամով (333.6 մլն ԱՄՆ դոլարով).

Գծապատկեր 2 ՀՀ արտաքին պետական պարտքի դինամիկան 2000-2011թթ(մլն. դոլար)³



³ ՀՀ Ֆինանսների նախարարություն, www.mfe.am

Գծապատկեր 3 ԱՄՆ դոլար և ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան 2001-2009թթ ընկած ժամանակահատվածում ⁴




Պայմանավորված 2004թ.-ին դոլարի փոխարժեքի համաշխարհային տատանումներով՝ այսօր երկրների մեծ մասը փորձում է իրենց արժույթները ֆիքսել համեմատաբար ավելի կայուն արտարժույթի՝ եվրոյի նկատմամբ⁵: Դիտարկելով դրամի կայունությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ պետք է նշել, որ այն տատանողականություն է պահպանել մինչև 2009թ-ը, սակայն առավել կայունություն է դրսևորել 2010-2011թթ.-ին: Հատկանշական է փաստը, որ վերջին տարիներին դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ աճի միտում է ցուցաբերում: Սկսած 2004թ.-ից ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար փոխարժեքը սկսեց անկում ապրել, ընդ որում, անկման ամենաստորին կետը 2008թ. էր՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով, որի արդյունքում ազգային դրամն ամերիկյան դոլարի նկատմամբ նախորդ երկու տարիների համեմատ արժեզրկվեց շուրջ 23%-ով: Սակայն արդեն սկսած 2009թ.-ից փոխարժեքը սկսեց կայուն աճ ապահովել: Այդուհանդերձ, 2009-2013թթ. փոխարժեքի աճը չգերազանցեց 2000-2004թթ. մակարդակը:

ՀՀ առևտրային հաշվեկշիռը 1995թ.-ից սկսած մինչև օրս բացասական է: ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը, որը հատկապես ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ, զուգորդվում է առևտրային հաշվեկշռի զգալի մեծ պակասուրդով: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը հիմնականում պայմանավորված է ներմուծման ծավալների աճով, ինչպես նաև ներմուծման և արտահանման ոչ համարժեքությամբ:

⁴ www.armstat.am

⁵ http://www.imf.org

Աղյուսակ 4 ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2004-2013թթ.⁶




2010թ. ապրանքների արտահանումը կազմել է 376.7 մլրդ. դրամ և ներմուծումը՝ 1409.4 մլրդ. դրամ: 2010թ.-ին արտահանվող ապրանքների մեջ գերակշիռ մաս են կազմում հանքահումքային արտադրանքը, ոչ թանկարժեք և թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը: Ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները և այլն:

ՀՀ և ԵՄ միջև արտաքին առևտուրը գրեթե միշտ ունեցել է աճի միտում: Եթե մինչև 1998թ. ՀՀ առևտրային հարաբերությունները իրականացվում էր հիմնականում ԱՊՀ երկրների հետ, ապա դրանից հետո ակտիվացան հարաբերությունները ԵՄ երկրների հետ: ԵՄ երկրների հետ առևտրային հարաբերությունները հատկապես ակտիվ են եղել սկսած 2002թ-ից: 2009թ-ին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 4031291.4 հազ. ԱՄՆ դոլար, որից 1207981.4 հազ. ԱՄՆ դոլար բաժին է ընկնում ԵՄ երկրների հետ առևտրին, այսինքն ԵՄ երկրների մասնակցությունը ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ 2009թ.-ին կազմել է 29.96 %, իսկ 2010թ-ին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ ԵՄ երկրներին բաժինը կազմել է 1534532.0 հազ. ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 32%: 2004-2010թթ ընթացքում ԵՄ-ի հետ ՀՀ ապրանքաշրջանառության ծավալներն աճել են մոտ 2.9, այդ թվում՝ արտահանումը՝ 2.1, իսկ ներմուծումը 3.4 անգամ:

⁶ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am

**Գծապատկեր 1 ՅՅ ապրանքաշրջանառությունը ԵՄ երկրների հետ
2009-2013թթ.(հազ. ԱՄՆ դոլար)⁷**



Այսպես, արդեն 2009թ.-ին ՅՅ և ԵՄ հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1,207,981 հազ. ԱՄՆ դոլար, որից արտահանումը կազմել է 310,186 հազ. ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 897,795 հազ. ԱՄՆ դոլար, ինչը գերազանցում է արտահանումը: Գրեթե նույնը պահպանվել է հաջորդ տարիներին ևս, չնայած այն հանգամաքնին, որ 2009թ-ից ի վեր ԵՄ երկրների հետ և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները անընդհատ աճ են ապրել: 2009թ. ԵՄ երկրներ ՅՅ-ից արտահանման ամենամեծ բաժինը ընկնում է Գերմանիային՝ 17,2% և Ռուսաստանին՝ 12,2%: 2012թ.-ին ՅՅ-ից Գերմանիա արտահանման ծավալը կազմել է 8993.1 հազ. ԱՄՆ դոլար, որը պակասել է 15%-ով: Ընդհանուր առմամբ 2012թ. նախորդ տարվա նկատմամբ ԵՄ արտահանման ծավալները կրճատվել են 7.29%-ով՝ 35971.7 հազ. ԱՄՆ դոլարից դառնալով 33346.6 հազ. ԱՄՆ դոլար: Այսօր ԵՄ երկրների հետ ապրանքաշրջանառության ծավալը գրեթե 18%-20%-ով գերազանցում է ԱՊՀ երկրների հետ ցուցանիշը: ԱՊՀ երկրների հետ առևտրային կապերի անկումը հիմնականում սկսվեց 2007թ-ից հետո, երբ արդեն նկատելի էր ԱՊՀ երկրների հետ առևտրում ՅՅ արտահանման ծավալների նվազումը, իսկ ԵՄ երկրների հետ ավելացումը: 2011թ. ՅՅ արտաքին առևտրաշրջանառության մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում Գերմանիային և Նիդերլանդներին: Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում մետաղները, որոնք հիմնականում արտահանվում են Գերմանիա և Նիդերլանդներ, քանկարժեք քարերը, որոնք ներմուծվում են, վերամշակվում

⁷ Գծապատկերը կազմվել է 2009-2013թթ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի հիման վրա

և վերարտահանվում էՄ (Բելգիա): ԵՄ-ից Հայաստան ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել, փոխադրամիջոցները, տեխնոլոգիան, սարքավորումները, քիմիական ապրանքները, սննդամթերքը, տեքստիլ իրերը: Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ՀՀ հիմնական մակրոտնտեսական իրավիճակը վերջին տարիներին համեմատական կայունություն է դրսևորել, հատկապես ԵՄ անդամակցության չափանիշների համապատասխանության տեսանկյունից: ՀՀ ԵՄ արտաքին առևտրային հարաբերությունները աճի միտում են ցուցաբերում և տարեցտարի այդ աճի տեմպը ավելի է արագանում: Սակայն, պետք է նշել, որ չնայած ՀՀ ԵՄ արտաքին առևտրային հարաբերությունների անընդհատ զարգացմանը, ՀՀ ԵՄ արտաքին առևտուրը հնարավորություն ունի զարգանալ առավել արդյունավետությամբ, մասնավորապես կարելի է որոշակի ապրանքատեսակներ ևս ընդգրկել ՀՀ-ից ԵՄ արտահանման մեջ, ինչպես օրինակ պատրաստի սպառողական ապրանքները, որոնք գրեթե բացակայում են այդ ցուցակում:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆ Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ

Բանալի բառեր. ՀՆԱ աճ, պետական բյուջե, արտաքին պարտք, փոխարժեք

ՀՀ ԵՄ անդամակցությունը բարդ և դժվար գործընթաց է, որի համար անհրաժեշտ են կայուն ինստիտուցիոնալ, քաղաքական և տնտեսական համակարգեր, մրցակցային շուկայական տնտեսություն, ընդհանուր օրենսդրական համակարգ և այլ կարևոր նախապայմաններ: Ուսումնասիրվել են ԵՄ անդամակցության չափանիշները, վերլուծվել են ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Կատարվել է ՀՀ և ԵՄ արտաքին առևտրային հարաբերությունների ուսումնասիրություն:

ECONOMIC TRENDS OF RA IN ACCORDANCE WITH EU MEMBERSHIP

Haykanush AYVAZIAN

Key words: GDP growth, state budget, foreign debt, exchange rate

The integration of Armenia to the EU is a difficult and complicated process, for which it is required stable institutional, political and economic systems, competitive market economy, general legal system and other important preconditions. In this article, a reference is made to the major economic indicators of the accession process.

ЭКОНОМИЧЕСКИЕ ЗАКОНОМЕРНОСТИ РА В СООТВЕТСТВИИ С ЧЛЕНСТВОМ ЕС

Айкануш АЙВАЗЯН

Ключевые слова: рост ВВП, государственный бюджет, внешний долг, обменный курс

Вступление Армении в ЕС является сложным и трудным процессом, который требует стабильных институциональных, политических и экономических систем, конкурентоспособной рыночной экономики, правовой системы и других важных условий. Эта статья посвящена наиболее важным экономическим показателям процесса интеграции. Проводится исследование относительно внешне торговых отношений ЕС.